

ՏՎՈՐ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԹԵՐԹ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

Կը Հրատարակուի Շաբաթը մի Անգամ

ՔԱԺՆԱԴԱՏԱԿԱՆ

Պուշկարիյ համար տարեկան 10 ֆր.
» » վեցամսեայ 5 »
Արտասահմանի համար տարեկ. 12 »
» » վեցամսեայ 6 »
Վ. ՃԱՐՄՈՒՆԻ ԿԱՆԻՍԻԿ

Նամակ, ծրար եւ այլ քաղաքացիական հասցեով

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՉԱՔՐԵՍՆ

Տէր և խմբագիր Տարա շաբաթագիրքի

Х. Чанжрянъ
Редакторъ на вѣстникъ
„ДАВРОСЪ“
Варна България
Отговорникъ Н. Драгулевъ

H. TCHAKRIAN
Rédacteur du Journal
DAVROS
Varna (Bulgarie).

ՊԱՅՄԱՆՔ

Խմբագրութեան եկամուտները կը հրատարակուին մասամբ կամ ամբողջութեամբ : Հրատարակուած ու չը հրատարակուած ձեռագիրներէն իւր չեն արտադրուի : Մանուցման տողը 20 սնթ. : Երեքէն աւելի անգամներու համար զատ սակարկութիւն : Մանուցմունք կ'ընդունուին ամէն ինչուա :

Ա. ՏԱՐԻ

ԵՐԵՎԱՆԻ 9 ՅՈՒՆԻՍ 1898

ԹԻԻ 17

ԼԵՌԱՆ ՄԱՐԴԸ

Ման իմացեալ անմահութիւն
եղիտ

Մեռնիլ կայ, մեռնիլ ալ կայ : Մահեր կան որոնք անմահութիւն կը բուրեն ու անմահաց յիշատակներ կը թողուն : այն կարգի մահերէն մէկն է, սուրբ վարդանայ ու իր հազար երեսուն և վեց քաջամարտիկ ընկերներու մահը, որոյ համար Եղիշ պատմագիր համառօտ ամփոփումով մը ըսած է, մահ ինչպէս աւերակներ :

Կեսնքեր ալ կան, որոնք մահէն աւելի սոփոյն, դադարէն աւելի տիրապետիկ և գիտէն աւելի ցուրտ սպառնալով մը կը լծողուն, դասալիք վատերուն կեսնքն է այն, ազգին ու հայրենիքին շահերուն ընդդիմադրաբար դաւաճաններն են անոնք, անվերջ ու անձայր անէծքներու ենթարկուած :

1896 Յունիս 14, յիշատակելի տարեգրութիւն է Մ. Աւետիսեան խմբին, վաղապարտական աշխարհի այդ գեղարուար շահատակեց անմահանալի անուան, որը կը թելագրէ զմեզ երկու խօսք ըսելու ազգային փրկութեան այն անձնուէր զոհերուն և սահառարակ նահատակութեանց նկատմամբ, որոնք կը կատարուին բարձրագոյն գաղափարին համար :

Նահատակութիւնը ըստ ինքեան սրբութիւն մ'է, հիացումի և երկիրը երկրպագութեան ամենէն վսեմ բաղինը և ամենէն բարձր ակնածութեան արժանի տաճարը, ուր կը մնայ նահատակելոյն յիշատակը :

Նազովրեցի Յիսուսի կատարի քննադատներն իսկ հիացումով կը յիշեն խաչ ի կռնակ անոր Գողգոթայի սարսափազէն վերելքն, իսկալի զոհին գոհարներէ աւելի թանկ կազին կեսնքին վերջակէտը՝ Գողգոթան :

Վթթեա, Ռենան շատ բաներ ըսին անոր համար, սակայն չյանա

դգնեցան իստուածին վաթած արեան կոթիլն իսկ ծաղրելու :

Գաւառացիներէ հեղինակը՝ ազատութեան, հաւատարմութեան եւ եղբայրութեան այն միակ և առաջնէկ ՎԱՐԴԱՊԵՏԸ, ներշնչեց իր 12 բովանդետներ, կոթել, կրտաւորեալ ճշմարտութեան ճանապարհի վրայ բուսած փուշերն ու տառապանքները, որոնք արգելք էին լուսաշող գաղափարին : առաքելք անշուք համբերատարութեամբ սուս զնային և ուղիղ ու անխաղաւան քաղաքականութեամբ (բարձրակարգ) զօրացած, հարկեցին ճանապարհը, որ պիտի առաջնորդէր կեսնքի նաւահանգիստը, և ահա այն նահատակութեան հետեւանքովն է որ այսօր՝ ամենէն քաղաքակրթութեամբ երկիրներու մէջ իսկ, երկնաբերձ դմբէթներու գաղափարն վերել, լուսաճաճանք կը փայլի ամենքին համար սրբացած մեծագոյն նահատակին շարկածը — Նազովրեցի Յիսուսին խաչը — :

Կրօնքի և բարոյականի վարդապետութեան յալածական նշանն է՝ խաչը, որուն համար անհաշիւ զոհեր տուած է նաեւ հայ ազգը, զայն պահպանելու և բարձր պահելու համար, որուն նկատմամբ սակայն գաղափարեան ապուշ վարժապետներ, Շաւառապներ, որոնք յիմարագոյն տրամաբանութեամբ համարձակութիւն ունեցան մինչև անգամ ըսելու. « ամուլ ստիներին մէջ որքան որ կաթ կայ, նոյնքան ալ հաւատք ու կրօնք հայ ազգութեան, հայ ժողովուրդին մէջ » : գիւսմիտ ամբաստանութիւն մը և եղջիւրաւոր զրպարտութիւն մըն է ասիկա հայ ազգին, հայ եկեղեցւոյն գէմ : Ինչպէս որ կրօնը, հաւատքն ու եկեղեցին ունեցած են իրենց նահատակներն ու խաչը, նոյնպէս եւ ազգային անկախութեան հաւատքը ունեցած է և ունի իր նահատակը, իր խաչը :

Հայրենասէր զինուորին, անձնուէր նահատակին ուսէն ու մէջքէն կախուած հրացանն ու սուրն

է որ, մերկապատեան կը շրջալար բարբարոս բռնապետութեան դէմ, այդ զինուորն է որ, կուրծք կուտայ վտանգին եւ անոր՝ Հայրենիքի սարին ու ձորին մէջ վարած կարմիր կաշակներն են որ, կուգան պատմութիւնը ըսուած տաճարին զարդն ու զարդարանքը ըլլալ : անխաղախ յեղափոխականին վաթած արեանովն է որ, կ'ուզուի ու կ'ուզուի ազգային ողջամտութեան ոգին, կը ծաղկի հայրենիքի բուն անդամներին վրայ :

Կը մեռնին իրենք, սակայն իրենց յիշատակը, իրենց մեծ գործը կ'անմահացնէ զիրենք :

Պէտք չէ մոռնալ այն նահատակները, որոնք զոհ գացին, թէ պէտ անդէպ ու կանխապես, սակայն միշտ խոհալին համար, հայրենիքի ազատութեան բոլորքեալ տենչով : Հազարաւոր Աւետիսեաններ, նահատակներ ունեցաւ հայ ազգը. եթէ այսօր չենք տեսնել չօշափելի արդիւնքը, պէտք չէ երբէք յուսաբերել թուրքներ, այլ պատուելով անոնց երջանիկ յիշատակը, գոռեպնդինք և աւելի խոհեմ ու շրջանայեաց իմաստութեամբ շարունակենք ճանապարհը, հարկեալով միեւնոյն ասան փրկարար ընթացքի սովեւ բուսած փուշերն ու տառապանքները, վար աւանդով կեղծ դիմակները, ցուցները յեղափոխական սուրբ անունին տակ սուտ զինուորները, որոնք կը յանդգնին ճշմարիտ հայրենասէրներուն և անձնուէրներուն յիշատակներն իսկ ազդուելու :

ՊՆԱԿԱՆԷՉ ԶԷ ՀԱՊԱ ԻՆՉ Է

Կարգ մը սրիկաներ, ինչպէս ամէն տեղ ու ամէն ժամանակ, ազգին ճակատագիրը իրենց գրամագլուխ շինած, անպարկեշտ ու անամօթ լրբութեամբ պարկեշտ հալածելով սպառնալիքներ կը գործեն միմիայն գրամ շրթներու ու իրենց դարսակ փորը կ'առնեն :

Նոյնպէս անցեալ օրեր յայտնի բարեգործ Տիար Ամիրխանեանի վրայ սպառնալիք կը գործեն գրամ կորուզելու համար : Յարգող Տիար Ամիրխանեան մայիս 17 թուով նամակ մը ուղղելով մեզ ցաւ կը յայտնէր եղբւրքեան վրայ առանց մատնացոյց ընելու սակայն յեղափոխական և յեղափոխութիւն անունները, նոյնպէս և մենք առանց մատնացոյց ընելու այս ու այն, պարզապէս եւ զածը սրիկայութիւն և անբարոյականութիւն անուանած էինք : չը գիտենք ի՞նչ պատճառով Յարգող Տիար Ամիրխանեանի յայտարարութիւնը և մեր ըստ պատշաճի դիտադատութիւնը « Շարժում » կոչուած խոյրառակ թերթի ամենախայտառակ խմբագիրներուն ջիղերուն դաշելով, իրենց յատուկ վայրենի եւ անբարոյական տրամաբանութեամբ, ամենքին յայտնի իրողութիւնը խեղաթիւրելով, ուզած են զրպարտել զՏիար Ամիրխանեան, եղած սպառնալիքը յայտնելուն համար և զայն ծանուցանող թերթերը պնակալէղ հռչակելով :

« Իրաւունք » խմբագիր Պ. Գաւրնճաշապառնակ անձնապէս պաշտօնաց համեմատ, նոյն կռնակի վրայ բաց, մօրէ մերկ խմբագիրները շնորհք բրած են ազատ արեւակել զայն պնակալէղ անունէն, որով բեռը ծանրացուցած կը լինին « Տաւրոս » և « Հայկի » վրայ, այս մասին պէտք եղած դատաստանը թողլով մարդու ականջ ունեցող ընթերցողներուն, կ'ըսենք բացարձակապէս թէ՛ « Շարժում » խմբագիրներուն այդ աստիճան բորբոքումը ի պաշտպանութիւն անպարկեշտ, անամօթ, խայտառակ և սրիկայ սպառնական գործի մը համար, կատկած կը բերէ մեզ թէ՛ նոյն ինքն « Շարժում » խմբագիրները մասնակցութիւն ունեցած են այդ զաղարկի ձեռնարկին մէջ, եթէ այս կասկածնիս ճիշդ է, պնակալէղ չեն հապա ի՞նչ են իրենք :

ՏԵՅԼԻ ՆԻՈՒԶ

9.

նոնց բարոյական և մանաւանդ
բովանդակային անկումը փութացնելով ,

չահագործութեան միջոցներն օր առ օր նուազեցողն : Կապիտալի բարձանց վրայ բազմազան ձևերով զաւակներն ճարպին ժայռէն ջարդու փշուր գլորեցան : Չաքրեանի և Ճգնաւորեանի յեղափոխականաց հետ ունեցած ընդհարումը ջաւ գրգռային ցնցում մը յառաջ բերաւ : Դաշնակցականաց վրայ, որ Հնչակեաններու վաղահաս անկումէն օգտուելով, նոր շահագործութեանց սկսած էին և վառնան կամ քիւրիպէն իրենց սիրագործութեանց կեդրոն կուգէին ընել :

Պանքայի հերոսներու, որոց միոյն Պուրկարիոյ Շուսի քաղքին մէջ ըրած գողութիւնը տեղն ու տեղով ու վկայութեամբ հաստատուելու պատրաստ եմ, վարպետները չէին կրնար անտարբեր ըլլալ : Ուղղակի կամ անուղղակի կերպով պէտք էր զարկ տալ Դաշնակցականութեան և մօտիկ յաշտութեան լաւագոյն նկատուած միջոցը վարձկան թերթի մը գոյութիւն ունենալն էր :

Վարդ Պատրիկով, դաշնակցականական հոգեփոխութեամբ Ուրուսիի և Վարդօի փոխակերպուելով, այս նպատակաւ, վառնայի մէջ ոչնչուած ջանքեր ի գործ դնելէ վերջ, մի քանի համամիտներու ընկերակցութեամբ, Շարժում թերթի հրատարակութեան սկսելով միշտ աշխատեցաւ Դաշնակցականութեան ուժ տալ և հակա-Չաքրեան հոսանք մը ստեղծել ժողովրդին մէջ : Ահա՛ այս է Շարժումի՝ Տ. Չաքրեանի և անոր Արգոյ աշխատակցին նկատմամբ վերջերս գրած անազնիւ գրադարութեան գաղտնիքին հանգոյցը :

Մեր ցայս վայր ի մէջ բերած դիտողութեանց վրայ յենելով, Շարժումի՝ վերջերս Տ. Տ. Չաքրեանի և Ճգնաւորեանի հանդէպ չարամտութեամբ և գիտակցաբար ունեցած ուղղութիւնն ու ընթացքն ընդհանուր առմամբ կ'որակենք «բարոյական սրբապիղծ ոճրագործութեան և չարանախանձ նենգութեան» բառերով :

Պուրկարայի և արտասահմանեան թերթերէն եւ ոչ մին Շարժումի չարանեղ գաւազանութեան չհետեւեցաւ, որովհետեւ հայրենիքի ցաւոց և դժոխքի խժգոնութեանց բնաւարտութիւնն եղող, Չաքրեանի նման անձնուրաց եւ հայրենանուէր հայ գործիչի մը, ի աղայ տիրոջ հայրենիքի փրկութեան նուիրուած ասպետ ոգիի մը եւ անվհատ զինուորի մը օրինակելի տիպն եղող անկաշառ եւ անաշառ երախտաւոր յեղափոխականի մը նկատմամբ այդ օրինակ բարոյական ոճրագործութեան միայն եւ մի միայն Շարժումի զեկավարներու պէս մտածող անտարմաբան գասալիքներու յատուկ էր :

Շարժումի խմբագրութեան այս ընթացքը իր բարոյական եւ իմացական նկարագրին ճշմարիտ հայելին եւ կարողութեան իրական փորձաքարն եղաւ, և իր անիրաւ և

նենգ դատաստանը՝ իր դատապարտութիւնը : Նա կրեց և պիտի կրէ դատապարտութեանց ամենամեծն ու ահուկին, ժողովուրդին զգուանքն ու թուքը : Հանրութեան բողոքն ու դատապարտութիւնն, և ուրախալի է մեզ ըսել, որ վառնայի խոհուն և լուրջ դասակարգի ներկայացուցիչներ սկսած են մերժել Շարժումը, դատապարտելի համարելով այդպիսի թերթի մը տրուելիք նիւթաւ կան և բարոյական քաջալերութիւնը, սա անշուշտ նախաքայլ մ'է և յուսալից ենք որ անհետեւանք չը պիտի մնայ :

Եթէ Շարժումի խմբագրութիւնը կը կարծէ, որ իր թերթի մէջ գրուածներն ժողովրդեան առջեւ անփիճելի ճշմարտութեան և Արամազդային պատգամի հանգամանք մը ունին, թող սթափ իր անուրջն որովհետեւ այն օրերը անգարձ անցան ու գնացին : Ժողովուրդը խակ և ամուլ երեւակայութեան մը զաւանցանքներ լսելու վիճակին մէջ չէ այլեւս : Հայ ժողովուրդը իր պատմական կեանքի ամէն երեւոյթներուն և փոխանցման օղակաւոր շրջաններուն տկնդէս՝ իր ինչպէս բարոյական նոյնպէս և քաղաքական կեանքի երկու հակադէպի ընդհանրութեան, յետադիմութեան և յառաջդիմութեան, ինքնաճանաչութեան և մեքենականութեան, կեղծիքի և ճշմարտութեան անաշառ և արդար քննադատն ու գերագոյն դատաւորն ըլլալով իրաւունքն միայն իրեն վերադասած է, և Շարժումի այդ հարցի մեծութեան առջեւ շատ ու շատ տկար է և իր այս ուղղութեամբ հիւլէ մը իսկ չարժեք :

(Շարունակելի) ՎԱՍԱԿ ՍԻՒՆԻ

Ա Պ Ա Գ Ա Ն

Մուք Գիտեցուան գործ պատկերացնէ թուլ, նրբին, կոս ու սրձեւ սառ ստուերներ կը սահին, Ուրուականներ կեանքի դժբաղդ գոհերուն, Սեւ անուրջներ երազային, դողդոջուն... : Բայց Առտուան արեւոյտիս բարմագեղ, Հուր Արփիին ցոլեցուն հեռ լուսագեղ, Անոնք արագ կը հեռանան, կը փախչին, Միջոցին մէջ կ'անհետանան, կը կորչին... :

Եւ ան ասեմ հորիզոն մը ջինջ, յսակ, Կը պարզուի ձիւն ամպերէն անապակ, Ուր տեղ կեանքն չ'ունի թախիծ, վիշտ, մոռնոք, Երջանկութիւն կ'ըմբռնուի հոն ամէն ոք :

Վառնա, 5 Յունիս 1898. Մ.

Հետեւեալ նամակը որ դրկուած է մեզ նոյնութեամբ կը հրատարակենք յանուն անկողմնակալութեան եւ նորա մասին մեր տեսութիւնը կը թողունք ուրիշ անգամուան :

ՓՏԱԾ ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Շամանակէ մը ի վեր Մարտի եւ Նոր կենսին մէջ Տիար Արփիար Արփիարեանի գրչէն ելած քննադատական գրուածներ կը տեսնուին մեր յեղափոխական կեանքի մօտ անցեալի մասին, գրուածներ, զորս իրաւունքի խմբագիրը լափելով կարգաւէ վերջ, իր թերթի ընթերցողաց ալ կը յանձնարարէ ջերմասէս :

Մենք այդ գրութիւններու մէջ թագուն թոյն մը կը նշմարենք, որմէ կը զգուշացնենք այն ազնուասիրտ սակայն միամիտ անձինք՝ որք դեռ կուրօրէն հաւատ կ'ընծային վարդապետութիւններուն՝ առանց գիտնալու թէ ի՞նչ հիմքերու վրայ կանգնուած են անոնք... :

Յայտնի է թէ Հնչակեան կուսակցութեան առաջին պառակտումէն ի վեր Արփիարեանի ջանքը եղած է միշտ հայ յեղափոխութեան մէջ եղած զեղծումներն ու ոճիրները բեռցնել կովկասէն եկող Ռուսահայ խաչագողներու ուսերուն միայն, շատ մութ գոյներով նկարագրելով անոնց գործունէութիւնը :

Որչափ որ չենք կրնար ուրանալ թէ՛ առանց թրքահայ խաչագողներու օգնութեան անոնք չեն կարող այդ ծանր բեռը տանիլ, պահ մը ընդունելով իսկ թէ՛ Տիար Արփիարի այդ կարծիքը ճիշդ ըլլալ, մենք կը հարցնենք իրեն թէ ի՞նչ սկզբունքի կը ծառայէր ինք՝ երբ այդ դաւաճաններու հետ ի թերայ Սրբանշիս Բաբեի չքեղ սեղաններու շուրջը՝ ծիծաղադէմ կը ճաշակէր եւրոպական համեղ կերակուրներ, եւ Սանդրայ գարեջրատունը բաժակներ կը պարպէր անոնց և Նազարպէկեանց ջուխիկ կենացը : Միտքէն կ'անցնէ՛ր արդեօք թէ այդ սեղանները շտկուած էին այն դրամով զոր տէրօրին գաղտնի խլած էր հայ դրամատէրէն՝ հարիւրաւոր եւ ըրտասարդ կեանքեր բանտի մթութեան եւ տառապանաց դատապարտելով եւ այն բաժակներ կը լեցունէին այն դրամով՝ զոր պանդուխտ գաւառացիին օրն ի բուն քրտնաթոր աշխատութիւնը վաստկած էր :

Այն ատեն ինչո՞ւ, կը հարցնենք, ինչո՞ւ չուգեց մեզի լուսաբանել ան ատեն, եթէ ինքը անկեղծ էր ու շահ չունէր :

Մարտի 10րդ. եւ 11րդ. թիւերը կարգաւոր՝ ակամայ այս հարցումը ընելու ստիպուած ենք եւ չենք կարող այլ եւս առանց կասկածի վերաբերել Տիար Արփիարի նկատմամբ՝ որ այժմ գոռում գոչումով՝ ուրիշներու սխալներով ու զեղծումներով կ'ուզէ համոզել մեզ, կ'ուզէ ժողովուրդի աչքին առաջ վարագոյր մը քաշել՝ ծածկելու համար իր կեղտոտ անցեալը, բայց իր անազան փաստաբանութիւնները

փտած են եւ եթէ դեռ կան իր աղուէսային քարոզներէն խաբուող աղուաւներ՝ կան եւ զինքը լաւ հասկըցողներ որոնց փաստերը սակայն չեն նմանիր Հրանդի Հազարէն ընկին :

Պ. Արփիարեան՝ Դաշնակցականաց ամէն խաչառակութեանց լաւ տեղեակ ըլլալով հանդերձ, կ'ըսէ թէ՛ ի սէր սուրբ գործին իրենք վերակազմաւք՝ միշտ ցանկացել եւ զիջանք են միանալու անոնց հետ ծածկելով՝ անոնց սխալները : Ի՞նչ կը նշանակէ այս, չենք հասկընար, ի սէր սուրբ գործին կ'արդարացնէ Դաշնակցականներու գործակցութեամբ՝ Պոլսոյ մէջ աւազակային դրութիւն մը, հանգէպ հայ վաճառականներու, ի՞նչ ըսել կուզէ ասով, միթէ կ'ուզէ խաչագողներու, եղբայրաւորակներու ձեռք ձգել :

Տիար Արփիարեան՝ ազգային փրկութիւն ըսուած իր հայկական նախկին ռուսահայ գաղափարակիցներուն գէմ զգացած ատելութիւնը ամբողջ ռուսահայութիւնը պարտաւերու աստիճան տալով կը տանի գրեթէ, ու կ'ըսէ Մարտի 11րդ թիւին մէջ. «Նիւթական եւ բարոյական զարգացումի այնպիսի աստիճանի մը հասած են ռուսահայտաւ հայերը՝ որ իրենց վրայ մեծամեծ յուսադրութիւններու իրաւունքը կը վայելենք, երբ թրքահպատակ հայերու վիճակին բարեփոխութիւնը խնդրի առարկայ է՝ և սակայն կը հարցնենք, ի՞նչ ըրին մեր դժբաղդութիւններու դարմանին համար : Եւ կը յարէ իբր ապացոյց իր ըսածին թէ «20,000 ռուսահայ երիտասարդներէն՝ որք իրենց զինուորական շրջանն աւարտած են՝ ոչ ոք Ձէյթունի մէջ տեսնուեր է : Ռուսահայ խորագետ, հեռատես անձնաւորութիւններէն, որք կառավարական մեծ պաշտօններու մէջ կը գտնուին՝ ոչ ոք իր խելքով հայկական դատին ծառայելու է եղեր : Պերճախօս՝ ուսեալ՝ հայրենասէր եկեղեցականներէն ոչ ոք եկեր է թրքահայ պանդուխտները սրտապնդելու » : Բազմաթիւ գիտուններէն, բրօքէսօրներէն, համալսարանականներէն ոչ ոք ըսեր է եղեր, ահա իմ տաղանդս թրքահայ թշուառ եղբայրներու փրկութեան կը նուիրեմ » : պատմաբաններէն՝ գրագէտներէն՝ հրապարակագիրներէն՝ ոչ ոք իր հոգին դուրս է ելեր (Տիար Արփիարի նման) թրքահպատակ հայոց փրկութեանը ծառայեցնելու իր կարողութիւնները : Հարուստ ռուսահայք, միլիոնաւորք՝ իրենց զբաղմունքները իրենց վարկը չեն դրեր եղեր թրքահպատակ հայ գործիչներու (Տիար Արփիարի՞ն) տրամադրութեան տակ զի այս ամենէն ոչ ոք իր ասպարէզը թողուլ ուզած է :

Այդ ամէնը լաւ՝ Տիար Արփիար՝ հիմակ ալ մենք՝ թրքահայերս մեզ եւ մասնաւորապէս Ձեզ հարցնենք, Ձեռնէ զատ ո՞ր թրքահայ կառավա-

բական պաշտոններն, ո՞ր խորագրով
ուսանալ գրագետը, գիտունը, բրա-
ֆետը, պատմաբանը, ո՞ր խորա-
հայ հարուստը, միլիոնատերը իր
ասպարեզը, իր հանգիստը թողնու-
մը հարկերի, իր աստապետը գա-
ւառացի եղբայրը միջոցներն ինչ-
պոյն օգնելու համար. Ո՞ր խորա-
գետ, հետաքննող, ճարտիկ, լրջա-
միտ անձնաւորութիւնը՝ որ ինչպէս
ուսանողացի՝ խորհրդացի մէջ եւս
չպահարկ, երաւ հայ յեղափոխու-
թեան մէջ զործան գեր մը կտա-
րենք . . . :

Այդ սեռակ մանկավարժութիւն-
ներ, Տիար Արփիար, որոնց ճակատին
դուք անտարբերութեան կիկըր զը-
րօշմալ կազմէք, վաղուց կշռած են
այս քանի մը տարիէ ի վեր յեղա-
փոխական եւ՛ բռնաւ ճարտարակ
նեւտունները՝ բլրան ստատոհայ թէ
խորհրդայն՝ կոչալին Հրանց թէ Ար-
փիար, Պատրիք թէ Չատրիք Ք.
Երկրպագեն Ռաբին թէ Գրաշակին,
այդ տեսակ անձնաւորութիւններ
կշռած են այս՝ զանոնք ամենը՝ Նե-
մեսիսի անխաղ կշիռով և պատժ
են թէ ձեռն աւելնում կշիռը հաւա-
սաւ է . . . :

Անոնց հեռաւան մտքին տոջեւ
վաղուց պարզուած էր 300,000 մե-
կորայի ջարդերու արիւնիակ տե-
սարանները՝ և 50 հազար որբւո-
ւեւ որբեւայրիկներու աղէկաւոր ա-
ղաղակը, ապագային մէջէն ստա-
լուց անոնց ակունքին հնչել էր, ու-
նոր համար. անոնք երբեմն մահը
նախամեծար համարեցին ջեղ վճա-
րելէ այնպիսի գումարներ՝ որոնց
հարկւաւորակը նուիրած էին
ազգին :

Իսկ, Տիար Արփիար, ինչպէս
կըսէք թէ «ուսանողք սկսած են
մեր կացութեան վրայ որոշ գաղա-
փար կազմել և պիտի ուզեն իրենց
անտարբերութիւնը թոյլ տալով
լուրջ գործունէութեան մը ձեռնար-
կել » ջեր յայտարարութիւնը այն
պահուն ուր Ռատոհայոց մէջ մե-
ծամեծ խոտութիւններ տեղի կու-
նենան կամ յիմարութեան մը ար-
դիւնք է, եւ կամ թաղուն նպա-
տակաւ մը եղած է . . . :

Ա.

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Յատալիկայ կիւրակէ, Յունիս 14,
ընդհ. Հայ նահատակները յիշատա-
կին համար հոգեհանգիստ պիտի
կտաւորուի վառձայի սուրբ Սար-
գիս Եկեղեցւոյն մէջ եւ հոգեհան-
գրատի արարողութիւնէն ետքը՝ Տ.
Աւքանազ, Մ. Աւետիսեանի զինա-
կից ընկերը, պիտի աստեալուէ,
մանրամասնօրէն նկարագրելով վա-
պուրականի նահատակները պարա-
գայները, որոց ինքը անձամբ ներ-
կայ գտնուած է : Տիար Աւքանազ
այս օրեր Պարսիկ սահմանագլխէն
հասած է վառնա :

ՊԱՏԱՍԻԱՆ ՄԸ

Առ «Մասնաւոր քրթակից»

ՇԱՐԺՈՒՄԻ

«Յարմար մարդը իր յարմար
ճեղքը» : Այս ծանօթ առածը կը
յիշեցնէր մեզ, անցեալ օր, Մարտ
թերթը պատմելով զողովեան
գէպերն արիւնքի մը, որ այժմ
ժընէվի մէջ Գրաշակի գործակա-
նէն ճիւղ այս ասածը կտրելի չեղա-
ինձ չի յիշել կարգաւ Շարժումի
վերջին թիւին մէջ Ֆիլիպէն Մա-
րիս 15 թուականու թղթակցու-
թիւն մը, զոր գտնելով իր սօճէն,
վատահայտը կարելի է ըսել թէ
«Իրաւունք» ի կրթման թղթակցին
է : Կըրեալ թէ «Իրաւունք» ան-
կողմնակալ թերթին սխալներէն
էւել եկած է սոց. կուսակցութեան
որ հիմա գտնելի վառն է «Իրաւունք»
վրայ բաց թերթին մէջ : Կը կրկ-
նեմ. «Յարմար մարդը իր յարմար
ճեղքը» :

Հաս, անցեալները, քանի մը հա-
րուստ անձնաւորութիւններ, մաս
մը իրենց քսակէն, մաս մ'ալ հան-
գանակութեամբ վարձեցին շոգե-
կաւք մը եւ ինչ և ճամբային ի Պա-
րիս 70 հայ աղքատ գաղթականներ
Այս գէպեր ներշնչել է այն սեւ
մատնուներն ու կծու դիտողու-
թիւնները, զորն Շարժումի մէջ,
Մասնաւոր թղթակցից՝ առած է
Մայիս 15 թուականէն մէջ : Այս
թղթակցութիւնը չի՛ նմանիր ծա-
վանցի՝ աւարեկեալի մը յուսա-
հատ ճիւղերուն, ջուրին վրայ մի
քանի վայրկեան տեղի կենալու
համար : Փայտի, ապակիի, կարմի
կտոր մը շատ է կարենալ երկարե-
լու համար յուսահատ դիմողու-
թիւն մը արիւնքուն գէմ : Գնանի
մը ամիսներէ ի վեր վառնայի թեր-
թերը արձագանք են եղած Ֆիլի-
պէի ազգային գործերուն :

Աւելորդ է հաս պատմել այն աղ-
տատ գէպերն, մեթին մէջ գոր-
ծուած շահատակութիւններն որոնց
վրայէն քողը վար առաւ Տաւրոս :
Միայն յիշեցնեմ՝ հոս թէ, երբ
Գալուցիին խնդրել գեւ իր սողմ-
նային վիճակին մէջ էր, բողբո-
կուները իրարու միջոցաւ յար-
ձակեցան տեղացի գերգաստանե-
րուն անցեալին, ներկային վրայ ու
ատով պատճառ եղան տեղացիի և
գաղթականի խնդիրը արձայնելու
կ'ապաստէր ըսել իրենցմէ հաշտու-
թեան համոզիչ բաւեր :

Ո՞ր միտք իրենց «գորգացած»
աւաւեւութիւնները, երբ իրենց
հակառակորդներուն ընտրած ան-
շահ գէպերով զինուած կուսեցան
անոնց դէմ :

Եթէ ունէին մի բարոյական ներ-
քին այժ իրենց հակառակորդներուն
դէմ, համանման ստորին միջոցով
կուսելու թեթեւ փորձութեան իսկ
պէտք չէր ինքզինքնին ենթարկել :
Այդ կուսները ապարդիւն մնացին :

Տեղացի ու գաղթականի խնդիր-
ներէ վերջ, գարձեալ մին անոնցմէ

կ'ուզէ գաւառացիի ու Պարսիցիի
միջևած խնդիրը յազել Շարժումի
միջոցաւ : Հոս ալ : Այս անկումի
օրերուն մէջ, երբ պէտք ունինք
սիրոյ, միութեան, եղբայրութեան,
չենք կրնար մտիկ ընել, քրթակից,
քաւ բարանջմունքներու ու եղ-
բայր եղբորդէմ գինուել իջմանա-
տան աղքատ հայեր իրենց ծնողա-
վայրը կը գրկուին, անթուլթենէ
փրկուելու համար : Եղբայրութեան,
գլխութեան գրաշն կրող այդ բա-
րեգործութիւնը ի՛նչպէս կը դպի
Նիւրնուր քրթակցին որ Պարսից հա-
յերը «Թուրքին տաքերը լող, ծայլ,
զարաւոր միջոցներով ապրող
կ'անուանէ :

Կը հարցնեմ այդ քրթակցին թէ՛
միթէ այդ գրկութիւնը ճշմարտու-
թեան կիկըր կը կրէ : Թուրքիա
երկիր մ'է, ուր, քմահաճոյքը կը
սիրէ օրինաց տեղ, բռնութիւնը՝
արդարութեան սեղ : Բնական է
որ այդ միջավայրին մէջ ապրողը,
ըլլայ գաւառացի, Պարսիցի, Հայ,
Յոյն, Հրեայ, օտարահայտակ,
նոյն իսկ թուրք, օտարած է գը-
լա թուել քմահաճոյքին և բռնու-
թեան : Գաւառներու թուրք բռնու-
կալութիւնը, կարծեմ, տեղի ան-
տանելի է քան թէ պօսինք : Շար-
ժումի յաջածագիրն ալ այդ մի-
ջավայրին զաւակն է : Ի՛նչ մասնա-
ւոր դիտումով մտնանիշ կ'ընէ մի-
այն Պարսից Հայը Թուրքին կրունկին
տակ տապալակող : Չարժեք կարեւո-
րութիւն տալ, որովհետեւ կառկա-
ծելի են նոյն իսկ իր ազգային զգա-
ցունները :

Ի՛նչ սարսաղեցիկ անտարբե-
րութեամբ կը ձայնէ Ֆիլիպէն.
«Մեռաւ, գնաց, հայուն համար-
եալ ճարտարութիւնը, արհեստա-
գիտութիւնը, միւս ազգաց* վրայ
ունեցած գերազանցութիւնը » : Չէ,
երբէք չէ մեռած. քաւ յուսահա-
տեցուցիչ, տեղի խճճանքը հայ-
ատեաց գրչիկ միայն արդիւնքն են
Հայուն ճարտարութիւնը, աշխա-
տասիրութիւնը, գերազանցութիւնը
չէ մեռած բնաւ : Այդ՝ ազգային
նկարագիրն է, միակ բարոյական
ուժը անկողնապալելի, այս հարստա-
հարութեան օրերուն մէջ : Իր գաղ-
թականի առաւապալից կեանքին մէջ
ալ իր վեհութիւնը և հայկական ու-
րաշ յատկութեան ապացոյցները
սուաւ ամեն օր : Չի վարսեցաւ
տաժանակիր աշխատութեանց ձեռ-
նամուկ ըլլալ. գաւառացիին իր
կարչեղ բազկաց գիմաց ու Պարսե-
ցին աղայութենէն ի վեր խոնու-
պան կամ արհեստաւոր, չի վարա-
նեցաւ փողոցներուն կամ գեղերը
չըլլան մանրավաճառութեամբ կամ
ուելէ չնչին գործերով զբաղել,
«հոցը հանելու համար» : Ֆիլիպէի
Հայ գաղթականութեան մէջ եւս չեմ
տեսած մէկը որ ապօրինի կամ ան-
բարոյական միջոցներու գիմէր ի
խնդիր հացի : Աշխատութիւն՝ այս
եղաւ ամենուն սկզբունքը : Ու այս

(*) Անշուշտ Արեւելի ազգաբնակու-
թեանց կ'ակնարկէ :

է նորէն սկզբունքն անոնց որք,
Պարսիցիի հիւրասիրութեան օգ-
տուելով, կ'ապրին Ֆիլիպէի մէջ :

Օրուան հացին համար աշխատիլ
պարտք մըն է, պատիւ մ'է : Ու-
երբ մարդ մը նուազ կը յաջողի իր
աշխատութեանց մէջ, ծաղրելի չէ
երբէք : Բարեկամարար խորհուրդ-
կուսամ այդ նեղահայեաց քրթակ-
ցին որ, իր զրամներուն վրայ ըս-
քանչոցող ծայրայեղ պահպանողա-
կան պոռժոռաւի ամբարտաւանու-
թեամբ անօրինեւոր խնդակ ծաղ-
րաշարժ անուանով չի մկրտէ իրենց
ճակատին քրտինքովը ապրող այն
երիտասարդները, որք իրեն խունկ
ծխելու ստորնութիւնը չեն ուզեր
ունենալ :

ՌԲ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Մեր վիճակը արդէն խոստովա-
նած ենք և նորէն կրկնելու հարկ
չենք տեսներ : Հոնգամանքներու
առջեւ ստիպուած ենք շատ տեղեր
«Տարուս» ձրի զրկել, որպէսզի
անոր տարածութիւն գտնելով՝ Հայ
ժողովուրդին ճակատագիրը իրենց
ասպարեզ ընտրող դիմաւորներե-
րուն վարագործը ծիլի ծիլի պատուի
վեր ինչոյ, եղբայրասպանութիւնը
գագրի, միւս թեան հոսանքը զօրա-
նայ, ընդհանուր Հայկական կաղ-
մակերպութեան շուտաւրոյթ գոյա-
թեամբ գտնեալեալ կատարեալ
հաստատու և հաստատուն յոյսերով
բարբոթիք Հայրենիքի և Ազգի
փրկութիւնը խոստացող սեղանին
շուրջ :

«Տարուս» իր տարած բարոյական
յաղթանակին վրայ ուրախ է, իսկ
նիւթական պակասութեան առջեւ
կը նեղուի, կը շարժարուի, ուստի
պարտաւորուած դիմում կ'ընենք և
կը խնդրենք որ «Տարուս» ուղղու-
թեան համակիր և միանգամայն
նիւթապէս ալ կարող բարեկամք
իրենց յօժարակամ նպաստներով
օգնութեան հասնին մեզ :

«Շարժում» բռնած թիրթի գրպար-
տութեանց դէմ, «Տարուս» ի խմբա-
գրութեան դատաւարութիւնը ի մտոյ
տեղի պիտի ունենայ. մանրամասնու-
թիւնը պիտի հրատարակուին օրը օրին :

«Շարժում» գաւաղի խմբագիրները
այժմէն փախուստ տալով ծաղկաւա-
րելով կ'ուզեն Յ. խմբագիրներէն վարդ
Պատրիկով, Իսահկ Աւագիւնի եւ կամ
վարդ, որ միւսնոյն անձնաւորութիւնն
է, արդէն Պառնայէն մեկնած է. նոյն-
պէս Յ. Գ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ.
գրած է : Խնդիրը կը ծանրանայ միայն
«Շարժում» ի պատասխանատու Տիար
Ղազար Թամիկեանի վրայ :

ՏՄԻՐՈՍ

ՀԱՏԸ 20 ՍՍՆԹԻՍ

Կը ծախուի «Սասուն» սրճարանի
կից՝ նպարտվաճառ Տիար Ռաֆայել
Գարաբաշեանի խանութը և Ապ-
տիւրաւհման մզկիթի գիմացը Տ.
Ջորպանէլեանի գրաւաճառանոցը :